**ՀՀ Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանի շնորհավորանքի խոսքը Ամանորի և Սուրբծննդյան տոների կապակցությամբ.**

Սիրելի հայրենակիցնե՛ր, մենք արդեն միասին պատմության գիրկն ենք ճանապարհում 2024 թվականը, որը մեր համայնքի համար նշանավորվեց կարևորագույն ձեռքբերումներով ու տեսանելի առաջընթացով, որոնք արձանագրվել են կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտներում: Պետության և համայնքի կողմից Մարտունի համայնքում կատարված կապիտալ ներդրումներն անցնող տարում կազմել են շուրջ 11,5 միլիարդ դրամ, որի արդյունքում մեր բնակավայրերում հիմնանորոգվել է 14 կիլոմետր միջպետական, 19 կիլոմետր ներհամայնքային նշանակության ավտոճանապարհներ, բազմաբնակարան 5 շենքերի տանիքներ, 5 մանկապարտեզների բակային տարածքներ, կառուցվել 47 կիլոմետր ոռոգման, 30 կիլոմետր խմելու ջրատարներ, 24 կիլոմետր լուսավորության ցանց, 6750 մետր գազատար, 9600 քառակուսի մետր սալարկված մայթեր, 1 Փառքի հուշահամալիր, շարունակվել են Ներքին Գետաշենի թիվ 1, Գեղհովիտի թիվ 2 միջնակարգ, Լեռնակերտի հիմնական դպրոցների, Աստղաձորի մանկապարտեզի կառուցման, Վերին Գետաշենի մարզադահլիճի և կից մասնաշենքի հիմնանորոգման աշխատանքները: 2024 թվականի ընթացքում բացվել և գործում են արդի չափորոշիչներով կառուցված ու լավագույն պայմաններով հագեցած Զոլաքարի և Ծովինարի մանկապարտեզները: Մոտակա ամիսների ընթացքում նախադպրոցական տարիքի հարյուրավոր երեխաների առջև իրենց դռները կբացեն հիմնանորոգված կամ նոր կառուցված Աստղաձորի, Երանոսի, Ծովասարի, Վարդենիկի մանկապարտեզները: Մեկնարկել է Մադինայի կրթահամալիրի կառուցումը, ընթացքի մեջ են գտնվում 2024 թվականից տեղափոխված սուբվենցիոն ու այլ գերատեսչությունների պատվիրատվությամբ իրականացվող կենսական ու սոցիալ-տնտեսական նշանակության բազաթիվ ծրագրեր:

Այս փաստերի ու թվերի հետևում մենք արդեն գործ ունենք մեր համայնքի բնակավայրերի զարգացման ու բարեկարգման, մարդկանց կենսապայմանների բարելավման ու կյանքի որակի բարձրացման, տասնյակ տարիներով անլուծելի թվացող սոցիալ-տնտեսական ու կենսական նշանակության հիմնախնդիրների կարգավորման, նոր աշխատատեղերի ստեղծման, գործազրկության ու աղքատության աստիճանական հաղթահարման անշջրելի գործընթացների հետ: Իսկ այս ձեռքբերումները մեզ համար հուսալի հիմք են ստեղծում՝ եկող տարում շարունակելու ընթացքի մեջ գտնվող կամ իրենց մեկնարկին սպասող հայրենաշեն ծրագրերը, որոնց մարդիկ սպասում են հույսով ու հավատով, որոնց իրականացման շնորհիվ Մարտունի համայնքը կունենա զարգացման ու առաջընթացի նոր թափ, ավելի բարօր կյանք, բարեկեցիկ ու գրավիչ միջավայր: Արդեն կազմվել են 2025 թվականի սուվբենցիոն ծրագրերը, պատվիրվել անհրաժեշտ նախագծերը:

Ջերմորեն շնորհավորում եմ Մարտունի համայնքի բոլոր ընտանիքների, մեզ մոտ հայրենի տուն գտած արցախցի մեր եղբայրների ու քույրերի, զինծառայության մեջ գտնվող ու հայրենիքի պաշտպանության դիրքերում կանգնած մեր զավակների, Սփյուռքի մեր հայրենակիցների ու հարազատների, պետական ու հանրային աշխատողների Ամանորն ու Սուրբ Ծնունդը, մաղթում խաղաղ հայրենիք, քաջառողջություն, նորանոր հաջողություններ, սեր ու ամենայն բարիք:

Թո՛ղ գալիք Ամանորի առաջին ակնթարթների հետ աշխարհում հաստատվի անխաթար խաղաղություն ու երջանկություն, և առաջին այգաբաբացին հայ ժողովրդի վրա ծագի ամենաավետաբեր արշալույսը, լուսապայծառ ապագան:

**Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ:**

Լավագույն ցանկություններով՝

**ՀՀ Մարտունի համայնքի ղեկավար**

**Հովհաննես Հովեյան**